

Վորդը ոտքի է կանգնում և հալածում է նրան
այս միջցին լուր է առնում և հրէից ապստամբու-
թեան և մինչ ինքը պարսիկների դէմ էր արշաւում
մեռնում է թռքախտից 164 թուին։ Սրան յաջոր-
դում է մի մասուկի։ Ան տի ոքոս և. և ւ պատու-
(164—162)։ որին սպանելով թագաւորում է Գե-
մե տրիոս Սոտէր (162—150)։ որի դէմ Հռով-
մը շարունակ թշնամիք էր յարուցանում։ Մարաս-
տանի սատրապն էր Տիմարքոս Միլետացին, որ նեն-
դաւոր և ազդեցիկ գանձապահ Հերակլիդէսի եղբայ-
րըն էր, որ սրա նման նախկին թագաւորի սիրելին
էր եղել և քանից իրք պատգամաւոր Հռովմ էր
ուղարկուել։ Արդ սա կրկին Հռովմ դնաց և ծերա-
կուուի համաճայնութիւնն առաւ թագաւոր կոչուե-
լու (161)։ Սա դաշն կոեց Մեծ Հայքի ար-
քայ Արտաքիասի (Արտաշէս) հետ ընդ-
դէմ Դեմետրիոսի, նուաճեց Մարաստանի հա-
րաւային ազգերին, տիրեց մինչև Բարելոն, Բարե-
լոնիսայի ժողովուրդն ատում էր Տիմարքոսին, ուս-
տի երբ Դիմետրիոսը նրա դէմ գուրս եկաւ, ժո-
ղովրդի համակրութիւնն իւր կողմն ունենալով
յաղթեց Տիմարքոսին և սպանեցի իսկ նրա եղբայրը
փախստեամբ ազատուեց (160)։ Այս յաղթութիւնը
մեծ ոյժ տուաւ Սելեկեաններին, որովհետեւ հռով-
մէական խոստումներով խարուողները տեսան կրկին
անդամ, որ Հռովմի պաշտպանութիւնն նշանակու-
թիւն չուներ այն երկրներում ուր նրա ձեռքը չէր
հասնում։ Բայց մակեդոնական տէրութեան վտանգ
չէր սպառնում ապստամբ կուսականներից, այլ արե-
լեան ազգերից։ Այս ազգերից առաջին տեղը պար-
թեներին է պատկանում։

Արշակ Բ-ին յաջորդել էր Քրիստոսի ու որ կառավարեց 15 տարի (191—176), սա գրամների վրայ իրեն կոչում է Արշակ Քիլադելփու (Եղայրասէր), Քիլադելփու էն (Հելլենասէր): Սրան յաջորդում է իւր անդրանիկ որդին Քրիստոսի որ գրամների վրայ Արշակ Թէռպատոր է կոչում: Այս թագավորների ժամանակ պարթևների տէրութիւնն ընդարձակուել էր գէպի հիւսիսարեմուոք և հարաւ: Պրաստէն իւր տէրութիւնը յանձնեց (շուրջ 171 թուին) իւր հանճարաւոր եղբայր Միթրիդատէսին (Միհրգատ), որ գրամների վրայ կոչուում է Արշակ Խափիանէս: այլ և Արշակ Քիլադելփուն Սա էր այն թագավորն աչաւ, որ պարթևների իշխանութիւնն Խանուում հաստատեց:

(Ծարունակելիք)

V. រាយរាជី



ԵՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աւերջերս Folk=Lore զիտնական և ռամսնեայ
հանդէսի 2 հաւում լոյս է տեսել բազմազիսատ հա-
յագէտ պրով. Կոնիբրիի մի յօդուածը՝ The Bar-
laam and Iosaphat Legend վերնագրով. Յարգելի ու-
սուցչապետն ուշագրութիւն է հրաւիրում այսուղ
Քարաղամ և Յավսափատ Նշանաւոր զրցցի
վրացերէն և Հայերէն թարգմանութեանց վերայ և
այսպիսով այդ զրցցին վերաբերեալ արգէն բաւական
ընդարձակ դրականութիւնը ճոխացնում է մի նոր հե-
տաքրքիր երկողի. Նա թարգմանաբար յառաջ է բե-
րում նախ մի քանի հատուածներ վրացերէն թարգ-
մանութիւնից՝ և պրով. Մարրի այդ մասին զրած մե-
նախոսութիւնից. Ըստ դնում է Հայկական օրինակի
առաջին կէսի և վերջին հատուածի թարգմանու-
թիւնը և վերջն աւելացնում է իւր եղրակացու-
թիւններն այդ թարգմանութեանց արժէքի և միւս
օրինակների հետ ունեցած առնչութիւնների մաս-
սին. Հայերէնը նորա կարծիքով համառօտեալ թարգ-
մանութիւն է ասորերէնից բայց իրեւ հին թարգ-
մանութիւն իւր նշանակութիւնն ունի. Վրացերէն
օրինակն ամինից կարեռն է:

Սի քանի ամիս առաջ ևս պրոֆ. Անդրեյի
On some Armenian votitiaе վերնագրով մի յօդուած
էր զբել Byzantinische Zeitschrift թերթի մէջ՝ հայ-
կական ձեռագրերից առաջ ինչ ինչ կարեւոր ձանօ-
թութիւնների մասին:

Հայկական ինդրին վերաբերեալ երկու շատ
հետաքրքիր տետրակիսեր են լցու տեսել նորերս.
Ա.՝ Les Arméniens et la question arménieune, conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'institut à l'Hôtel des Sociétés savantes, le 9 juin 1896. Paris (Հայերը և հայկական Հարցը, հրապարակախոսութիւն Անատոլ Լերոյ-Բօլիզի, կարգացուած Գիտն ական ընկերութեան մէջ, 1886 յունիս 9-ին. Փարիզ).
Բ.՝ Martyrologe arménien, tableau officiel des Massacres d'Arménie, dressé après enquêtes par les six ambassades de Constantinople etc. par le P. S. Charmetant. Paris (Հայկական մարտիրոսարանութիւն, պաշտօնական նկարգիր Հայկական կոտորածների, և Պոլ-

սի վեց գեապանութեանց քննութիւններով հաստատուած և լն. գործ Հայր Շարմատանի Փարիզ:

Աւուցապետ Մ. Զերազ Լոնդոնում հրատա-
րագործուած իւր Հոմեր և լուսապետ Համակա-
ռագործուած իւր Հոմեր և լուսապետ Համակա-
ռագործուած իւր Հոմեր և լուսապետ Համակա-

y_1 • y_2 •



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱԾՈՒՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱԳՐԱԿԱՆՆ.

ԴՊԲՈՑԵԿԱՆ ԹՔԸԿԻ ԿԱՐՏՔՆ ՈՒ ՆԲԱ ՊԱՐՏ-
ՔԵՐՆ.

Սեր գալու սկզբից դպրոցն և մանաւանդ ժողովրդական գալորոցն առանձին ուշագրութեան առարկայ է եղել ազգերի, տէրութիւնների և համայնքների համար։ «Ազգի ապագան դպրոցն է պատրաստում»։ այս նախադասութիւնն յար յեղյեղուել է և չափազանցութեամբ իսկ շեշտուել ուստի զարմանալի չէ, որ կիսադարեան ըրջանում բոլոր եւրոպական կրթութիւնը յեղափոխութիւն է, կրել և նոր կազմակերպութիւն ստացել։ Դրաբոցի բարձր նշանակութեան հետ զուգընթացարար մշտկուել է և մանկավարժական զիտութիւնն, որի նշանաբանն է եղել «կրօնական—բարոյական» կամ «բարոյական—կրօնական» գաստիաբակութիւն։ Հոգեկան կրթութեան գե-

բակը ողջ նշանակութեան առաջ նսեմացել է
մարմնու կրթութեան կարեորութիւնն ուստի
նոր և նորագոյն դպրոցներում մարմնու կրթ-
թութիւնը յետ է մնացել: Չե կարելի ուրա-
նալ այն ջանքերն որ եղել են մարմնու կրթ-
թութեան զործը բարձրացնելու համար: մարմ-
նամարզութեան զարգացումն գլուխական ա-
ռաջապահութեան բարդաւաճումն և դպրոցնե-
րի շինութեան և կարստիների բարեփոխութիւ-
նը չետեանք են այդ ջանքերի սակայն փորձը
ցոյց է տալիս որ այդ ամենը կիսամիջոցներ են
միայն և գլուխական բարենորուգման խնդրում
առաջին տեղը բռնումէ այժմ դպրոցական
բժիշկ պաշտօնեաների հաստատութիւնն և
նրանց գործունելութեան սահմաննի գծումն:

Մանկավարժութեան սկզբունքներից մէկն է եղել, որ ուսուցիչը պէտք է հոգեբան լինի բայց ոչ բժիշկ, ուսուցիչն պէտք է օգնէ բժիշկը, բայց ինքն ուսուցիչը պէտք չէ որ բժիշկ լինի: Այս բոլորովին ծիշդ է այն դպրոց ների վերաբերութեամբ, որոնք թէ ուսուցիչ և թէ բժիշկ պաշտօնեաներ կարող են ունենալ իսկ զիւղական և ժողովրդական դպրոցներում ուսուցիչներն հոգեբանութեան զիտութիւնից ոչ նուազ կարիք ունին առողջապահութեան և բժշկութեան զիտութեան: Անմտութիւն կը լինէր հարկաւ պահանջելը, որ իւրաքանչիւր ուսուցիչ բժիշկ լինի. բայց մի թէ, ամէն մի ուսուցիչ հոգեբանն է, թէպէտե նա ուսած էլ լինի հոգեբանութիւն: Բժիշկները կարողացել են հասարակօրէն այն համոզումները շնչել որ ինչ իրենք դիտեն, ուրիշներն ըմբռնելու ընդունակ չեն. հենց այսպիսի բժշկներն են որ տգետ հասարակութիւնների մէջ ամենից աւելի յաջողութիւնն ունին, բայց այդու չեապացուցանուում, որ բժշկութիւնն անհասանելի է և նրա սկզբունքները կարելի չէ համառօտութեամբ և ամփոփ աւանդել: Այս զիտակցութեամբ է ահա, որ շատերը պահանջում են առողջապահութեան և բժշկութեան դասեր աւանդուին ուսուցչանոցներում: Հարկաւ այլ է մասնագետ բժշկի գործն և այլ բժշկութեան ծանօթ ուսուցչինք: ուստի այն դպրոցները,